# ՀԱՅԵՐԻ ԲՌՆԱԴԱՂԹՆ ԻՐԱՆ 17-ՐԴ ԴԱՐՈՒՄ
## (Ա. Դավրիժեցու տվյալներով)

Լ. Գ. ԳԱՆԵՂՅԱՆ

*1604 թ. աշնանը, հայոց նավասարդին, Արարատյան երկրով մեկ մրրիկ անցկացավ, սփռելով մի կողմից օսմանյան բանակի գալստյան բոթը, մյուս կողմից պարսից Շահ-Աբաս Մեծի հրամանն իր զորագնդերին՝ անհապաղ նահանջել։*

*Դա առաջին անհաջողությունն էր, որ կրում էր պարսից բանակը մեկամյա հաղթարշավից և գրեթե ողջ Անդրկովկասն Օսմանյան Թուրքիայից վերանվաճելուց հետո։*

*Պարսիկների կայծակնային հարձակումից հանկարծակիի եկած և Անդրկովկասի՝ իրենց տիրապետությանը ենթակա շրջանները մեկը մյուսի ետևից թշնամուն հանձնած օսմանցիները այժմ ուշքի էին եկել, բավականաչափ ռազմական՝ուժ կենտրոնացրել և փորձված զորավար Ջղալօղլու ղլխավորությամբ անցել հակահարձակման։*

*Կշռելով Իրանի և նրա հակառակորդի ռազմական պոտենցիալ հնարավորությունները, վերլուծելով ստեղծված իրադրությունը, պարսից շահնշահը կտրական որոշում ընդունեց՝ խուսափել վտանգավոր, Իրանի համար պարտության սպառնալիքով հղի ճակատամարտից և ամբողջ թափով նահանջել։*

*Սակայն դա լոկ նահանջ չէր։ Դա նաև շահի նախօրոք կազմած ծրագրի իրագործումն էր՝ զուգորդված այսպես կոչված «այրված հողի» կամ «հրկիզման» տակտիկայի հետ։*

*Նախագծվում էր ամբողջությամբ ամայացնել ու ավերել Արաքսի ձախ ափին ընկած բնակելի շրջանները, ոչնչացնել ու հրի մատնել պարենը, և, որ ամենաաղետալին էր՝ բնակչության բռնի կերպով գաղթեցնել Իրան։*

*Շահ-Աբասի ձեռնարկած այդ բռնագաղթը դարձավ հայ ժողովրդի պատմության արյունոտ էջերից մեկը, որ կոչվեց «մեծ սուրգուն» (մեծ գաղթ). տառապրություն, որ իր մասշտաբներով, բնույթով և ունեցած հետևանքներով առանձին տեղ գրավեց և դրոշմվեց հայոց պատմության մեջ, իբրև նրա ծանր դրվագներից մեկը։*

*Մեծ գաղթի վերաբերյալ մեզ հասել են արժեքավոր աղբյուրներ, որոնց թվում Առաքել Դավրիժեցու «Պատմությունը»։*

*Դավրիժեցին թեև դրում է աշխարհացունց դեպքերից կես դար հետո, սակայն կարելի է նրան համարել ժամանակակից, քանի որ նրա տեղեկությունների հիմքում, բացի ժամանակի գրավոր աղբյուրներից, հիշատակարաններից, «Ողբ»-երից, պահպանված վկայություններից, ընկած են նաև ժամանակակիցների, գաղթի անմիջական մասնակիցների և ականատեսների դեռևս չսպիացած տպավորությունները, կենդանի զրույցներն ու հաղորդումները։ Մյուս կողմից, Դավրիժեցին այդ իրադարձություններից անջատված է ժամանակով, որը հնարավորություն է տալիս նրան դեպքերը գիտելու ժամանակի*

պրիզմայի միջով, խորանալու նրանց ընթացքի մեջ, տեսնելով թեկուզ իր օրերը, Շահ-Աբասի՝ իրականություն դարձած ծրագրերը, այն հետևանքները, որ ունեցավ մեծ գաղթը։

Ալսպիսով, գաղթի մասին Դավրիժեցու պատմությունը աչքի է ընկնում ոչ միայն իր սրտառուչ և հուզիչ կողմով, այլև փաստերի լայն ու բազմակողմանի մատուցմամբ, որով հնարավոր է դառնում եզրահանգումներ անել շահի նպատակների, գաղթեցվող բնակչության տարբեր շերտերի դիրքի ու վիճակի և նրանց նկատմամբ իրանական իշխանությունների վերաբերմունքի և այլ արցերի մասին. զրանով իսկ լրացվում կամ ճշտվում են այլ աղբյուրների տեղեկությունները, մասնավորապես պարսից հեղինակների միտումնավոր, կցկտուր հաղորդումները։

*

Ձեռնարկելով բռնագաղթը, Շահ-Աբասը հետապնդում էր ինչպես ստրատեգիական, այնպես էլ քաղաքական և տնտեսական նպատակներ։ Դավրիժեցու արտահայտությամբ՝ հիմնական ստրատեղիական նպատակն այն էր, «...զի եկեալ օսմանցւոցն անբնակ զտանիցեն զերկիրն ի մարդկանէ»[1]։ Արարատյան երկիրը թափուր պետք է գտնեին ոչ միայն օսմանյան զորքերը, այլև Իրան յաղթեցվող նրա բնակչությունը, եթե վորձեր հայրենիք վերադառնալ[2]։

Հեղինակների մեծ մասը Շահ-Աբասի ձեռնարկման մեջ շեշտը դնում է ռազմա-ստրատեդիական կողմի վրա։

Հայտնի է, սակայն, որ Իրանի տիրակալը հետապնդում էր ավելի հեռուն գնացող նպատակներ։

Նկատի ունենալով այն փաստը, որ դերեվարությունն անդարձ էր, և ոչ ոք իրավունք չուներ հետագայում ետ վերադառնալու, Լեոն իրավամբ նշում է, որ «Շահ Աբասը միմիայն ռազմադիտական նկատառումներով չէր ղեկավարվում»։

Շահի պլանների մեջ էր մտնում՝ զարկ տալ իր երկրի արտադրողական ուժերի զարդացմանը, խթանելով տնտեսական վերելքին, հողագործության, արհեստների, առևտրի ծաղկմանը, Իրանի կենտրոնական նահանգների և, մասնավորապես, մայրաքաղաքի բարգավաճմանը ի հաշիվ ծայրամասային և նվաճված շրջանների, միաժամանակ, թուլացնելով Սեֆևյան պետության էթնիկապես այլազան շրջանները, ճնշել նրանց դիմադրությունը։

Անդրկովկասի բնակչության մասսայական դաղթեցումով Իրան, պարսից արքան բարենպաստ հող էր ստեղծում՝ իրագործելու իր այս ծրագրերը։ «Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անդերծանելի հարկատուք՝ ծառայք. և հողագործք մինչև ցյաւիտեան» — գրում է Դավրիժեցին, մեկնաբանելով Շահ-Աբասի նպատակները[4]։ Շահին քաջ հայտնի էին հատկապես հայ առևտրականների և արհեստավորների ձիրքն ու շնորհքը, որոնք քիչ գեր չէին խաղա և Իրանում։ Ժամանակը հետագայում ցույց տվեց, որ Շահ-Աբասը չէր սխալվել իր պլաններում։

---

1 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 38 (այսուհետև՝ Դավրիժեցի)։

2 Նույն տեղում, էջ 41։

3 Լ ե ո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 246։

4 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 38։

Առանձնապես հրապուրիչ էր Ջուղայի հայ վաճառականությանը և նրա առևտրական կապիտալն Իրանի շահերին ծառայեցնելու ծրագիրը։

Հայտնի է, որ Ջուղան Եվրոպա-ասիական մետաքսի առևտրի խոշոր կենտրոն էր[5]։ Ջուղայի վաճառականների առևտրական կապիտալի միջնորդությունն ակնառու դեր էր խաղում մետաքսի միջազգային առևտրում։

Իրրև Վենետիկի ու Ճենովայի՝ Ասիայում մեծ համբավ ունեցող առևտրական գործակալներ, Ջուղայի հայ վաճառականները Շահ-Աբասի ուշադրությունը գրավել էին նրա թագավորության հենց առաջին տարիներից։

Քանի որ 1590 թ. Կոստանդնուպոլսի հաշտությամբ Ջուղան անցել էր Թուրքիային, Իրանի համար կրկնակի անհրաժեշտություն էր, որպեսզի հեքիաթային «ոսկե քաղաքն» իր ձեռներեց բնակիչներով և ողջ հարստությամբ զառնաբ պարսից թագավորության սեփականությունը։

Եվրոպա-ասիական առևտրական ճանապարհն անցնում էր Թուրքիայի տերիտորիայի վրայով, նրան բերելով հսկայական շահ։ Շահ-Աբասը այնքան համարձակ էր իր պլաններում, որ կանգ չառավ նաև մետաքսի միջազգային առևտրի քարավանային ճանապարհը տեղափոխելու հարցում, որն Իրանի համար եռակի դրական նշանակություն ուներ։

Այդ գայթակղիչ ծրագրի իրականացման առաջին օղակը դարձյալ Ջուղան էր, որն այնուհետև պիտի գտնվեր պարսկական հողում և պարսից մայրաքաղաքում շարունակեր իր նախկին դերը։

Իսկ հասունացած այդ ծրագիրը կյանքի կոչելու համար Շահ-Աբասի կողմից հարմար գիտվեց նահանջի պահը։ Այսպիսով, երբ ակնհայտ են շահի նպատակները, պարզ է դառնում, որ բռնագաղթը նրա կողմից նախապես ծրագրված էր, և դժվար է այս հարցում համաձայնել որոշ հետազոտողների, այդ թվում՝ Հ. Առաքելյանի այն կարծիքին, թե «հայերին Պարսկաստան գաղթեցնելու միտքը նրա (Շահ-Աբասի — Լ. Դ.) մեջ ծագեց հետո», այսինքն օսմանցիներից նահանջելիս[7]։ Թերևս այդ բռնագաղթի մասշտաբները և կամ մեթոդներն են թելադրվել հետո՝ ըստ ռազմա-ստրատեգիական հանգամանքների։ Դավրիժեցու հավաստմամբ ևս՝ շահը «..ի վաղ ժամանակաց ունէր ի մտի պքշելն ազգին քրիստոնէից և զաւերելն աշխարհին հայոց...»[8]։

*

Դավրիժեցու հաղորդման համաձայն բռնագաղթն իրացվել է մի քանի փուլով։ «...Զի եօթն և ութն անգամ որիշ որիշ զկնի միմեանց քշեալ տարեալ է»,— գրում է Դավրիժեցին, վկայակոչելով բազում հիշատակարաններ, ինչպես

5 Այդ մասին տե՛ս С. В. Тер-Аветисян, Город Джуга, Тбилиси, 1937: В. Банбуртян. Армянская колония Новой Джульфы в ирано-западноевропейских экономических и политических взаимоотношениях в XVII веке. М., 1965 (канд. дис.)

6 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, մասն Գ, Կահիրե. 1961. էջ 135, Տե՛ս 1592 թ. Շահ-Աբասի հրովարտակը ջուղայեցի Խոջա Նազարին առևտրական արտոնություններ շնորհելու մասին (Հ. Տեր-Հովհաննեսյան, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Նոր Ջուղա, 1880, հ. I, էջ 158—159)։

7 Հ. Առաքելյան, Պարսկաստանի հայերը։ Նրանց անցյալը, ներկան և ապագան. մասն Ա, Վիեննա, 1911, էջ 76։

8 Դավրիժեցի, էջ 38։

նաև այն անձանց, «որք ինքեանք իսկ քշածք էին» և անձամբ պատմել են այդ մասին[9]։

Իսկ բոնաղաղթի սկիզբը դրվել էր դեռևս այն ժամանակ, երբ շահը նոր էր սկսել իր արշավանքն Անդրկովկաս, և տասնյակ հազարավոր մարդիկ Անդրկովկասից և Արևմտյան Հայաստանից տեղահան էին եղել ու քշվել Արարատյան երկիր՝ այնտեղից հետագայում Իրան տեղափոխվելու համար[10]։

Պետք է ասել, որ բոնաղաղթի տարեթիվը դանադան հեղինակների մոտ տարբեր է։ Հետազոտողներից ոմանք «մեծ սուրգունի» թվականը համարում են 1605-ը[11], իսկ այլոք՝ 1604-ը[12]։ Ըստ Դավրիժեցու դաղթն սկսվել է հայոց ՌԾԴ թվականի նավասարդին[13]։ Նույն թվականն են նշում մեծ թվով աղբյուրներ[14]։ Տոմարների զուգակցման ընդունված կանոնների համաձայն հայոց ՌԾԴ (1054 թ.) սկիզբը համապատասխանում է հռոմեական (Գրիգորյան) տոմարի 1604 թվականի աշնանը[15]։ Այդ թվականի ստուգությունն են հավաստում նաև մահմեդական տոմարով արտահայտված տվյալները[16]։

Այդ մասին հուշում է նաև դեպքերի հաջորդականությունը. այն է՝ Երևանի գրավումը 1604-ի հունիսին, որին արագորեն, գրեթե միաժամանակ հետևում են օսմանցիների հակահարձակումը, պարսիկների նահանջը և դաղթը. վերջինս ընդհատվում է ձմռան շրջանում և ավարտվում հաջորդ տարվա գարնանը։ Այսպիսով, մեծ գաղթը կատարվել է 1604—1605 թթ.։

Դավրիժեցու տվյալները հնարավորություն են տալիս գծելու բոնաղաղթին ենթարկված շրջանների դոտին։ Այն ընդգրկում էր. Նախիջևանը, Երևանը, Եղեգնաձորը, Լոռին, Համզաչիմանը, Ապարանը, Շարապխանան, Շիրակվանը, Ղարսը, Կաղզվանը, Ալաշկերտը, Մակուն, Ադրակը, Սալմաստը, Խոյը, Ուր-

---

9 Նույն տեղում, էջ 148։

10 Նույն տեղում, էջ 33, 35—36, հմմտ. اسکندر بیك ترکمان (منشی)، تاریخ عالم آرای عباسی، ج ۲، تهران، ۱۳۳۵، ص ٦٦٦ (այսուհետև՝ منشی)

11 Տե՛ս Пигулевская и др., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Л., 1958, стр. 277; Петрушевский И. П., Азербайджан в XVI—XVII вв. («Сборник статей по истории Азербайджана», вып. I, Баку, 1949, стр 277); Тер-Аветисян С., Город Джуга, стр. 1, 107; Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 2, Երևան, 1959, էջ 84, Հ. Ասաքելյան, Հաձրագիտական բառարան, հ. I, Թիֆլիս, 1915, էջ 6 և այլն։

12 Տե՛ս օր.՝ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 246..., Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 216։

13 Դավրիժեցի, էջ 40։

14 Տե՛ս Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը (Մանր ժամանակագրություններ, (կազմ. Վ. Հակոբյան), Եր., 1956, հ. 2, էջ 428), Նոր Ջուղայի Սուրբ Մինաս եկեղեցու՝ 1607 թ. գրված ավետարանի հիշատակարանը (С. Тер-Аветисян, Город Джуга, стр. 71); Խաչատուր աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 102, և այլն։

15 Պետք է նկատի ունենալ, որ իրադարձությունը տեղի է ունեցել հայոց նավասարդին, այսինքն 1054-ի սկզբին։ Հետևաբար հայոց Մեծ թվականը հռոմեական տոմարով արտահայտելու համար հիշյալ թվականին պետք է գումարել 550։

16 Օր.՝ Շահ-Արասի պալատական գլխավոր աստղագետ Ջալալ էդ-Դին Մոհամմադ Յազդիի հաղորդմամբ բոնագաղթը կատարվել է հեջրի 1013 թ. ռաջաբ ամսին, որը համընկնում է 1604 թ. վերջերին (տե՛ս نصرالله فلسفی، زندگانی شاه عباس اول، ج ۳، تهران، ۱۳۳۹، ص ۲۰۵)

միան, Թավրիզը, ինչպես նաև Կարինը, Բասենը, Խնուսը, Մանազկերտը, Արծկեն, Արճեշը, Բերկրին, Վանը և այլն[17]։

Հիշյալ վայրերում նշանակված վերակացուներն իրենց ջոկատներով պարտավոր էին տեղահան անել ողջ բնակչությանն առանց խտրության և առանց որևէ միջոցի առջև կանգ առնելու[18]։ Նրանք գործում էին ամենայն դաժանությամբ, ժողովրդին անողոքաբար դուրս քշում իրենց տներից և ապա հրկիզում եղած ամեն ինչ՝ տները, պարենի և խոտի պահեստները և այլն։

Սկսված խուճապն ավելի է մեծանում, երբ Ջղալօղլին հասնում է Ղարս, և Շահ-Աբասն արագացնում է նահանջը։ «Եւ եղեն երեք բանակք մեծամեծք և անհունք,— գրում է Դավրիժեցին,— առաջին բանակն ժողովրդեանն, երկրորդը՝ բանակն պարսից, երրորդն՝ բանակն օսմանցւոց»[19]։ Երկյուղ կրելով, որ օսմանցիները կշարժվեն ավելի արագ և իրենց կհասնեն նախքան Արաքսն անցնելը, պարսից հրամանատարությունը տենդորեն շտապում է և ստիպում, որ զորքը և ժողովրդի բազմահազարանոց բանակը օր առաջ հասնեն գետի մյուս ափը։

Դավրիժեցին կենդանի գույներով է նկարագրում այդ ողբալի տեսարանը։

Խոշտանգելով և ահաբեկելով ժողովրդին, գինվորները ստիպում են նրանց թափվել գետը՝ շարժվելու դեպի մյուս ափը։ Թույլերը, ծերերը, մանուկները, նրանք, ովքեր լողալ չգիտեին, ջրասույզ են լինում, «և թէպէտ անցին, որք անցին, այլ բազումք այնք էին, որք հեղձմամբ ջրոյն մեռան»[20]։ Շատերը կառչում են պատահած առարկայից և կամ գսնդանուց ու այդպես ափ հասնում[21]։ Այդ կերպ է վերկվում և Ավգուստինոս Բաջեցին, որի, իբրև դեպքերի անմիջական մասնակցի, տողերը հաստատում են Դավրիժեցու պատմության հավաստիությունը։

Ահա Ավգ. Բաջեցու նկարագրությունից մի հատված. «Եկաք հասաք ի գետն, որ կոչի Արաստղ (Արաքս), խիստ մեծ, որ մարդ առանց նաւի չէր կարել անցնել։ Ամենայն ժողովուրդ լցին ի մէջն առանց նաւի և առանց տաւարի, որն որ անցաւ, որն որ ջուրն տարաւ, որն որ հայրն կանչելով, որն որդի ձայնելով, որն մայրն կանչելով... շատունք ի գետն խեղդեցան։ Ես մեղաւորս այլ դեռն կուտաներ. մեկ ջամշի (գոմշի) աքի ընկաւ ձեռս, Աստուծով դուրս եկի, լալով դեպի Աստուած հառաչելով. ամենեքեան լալով անցնէին»[22]։

Ուշադրության առնենք, որ վերոհիշյալ տողերի հեղինակը հայ կաթոլիկ քահանա է, հոգևոր դասի ներկայացուցիչ, որը, ինչպես տեսնում ենք, ոչնչով արտոնված չի եղել և ալեկոծյալ ամբոխի մեջ անցել է գետն ու պատահաբար փրկվել։ Դավրիժեցու նկարագրությունը ևս խոսում է այն մասին, որ գաղթի ժամանակ հոգևորականությանը շահի իշխանության կողմից առանձին ուշադրություն չի հատկացվել, որպիսին ցույց է տրվել ջուղայեցիներին[23]։

---

17 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 53, 450—451, հմմտ. Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն, հ. I, Վաղարշապատ, 1870, էջ 19—20, այստեղ նշվում են նաև Քարթլին և Կախեթը։

18 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 39—40։

19 Նույն տեղում, էջ 41։

20 Նույն տեղում, էջ 44, հմմտ. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 46, էջ 249ա—249բ։

21 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 43։

22 Ք. Պ ա տ կ ա ն յ ա ն (հրատ.), Նշխարք մատենագրութեան հայոց, Պետերբուրգ, 1884, էջ 6։

23 Թեև հոգևորականությունը հետագայում դառնալու էր շահի հենարաններից մեկը։

Մեծ տառապանքի և բազում զոհերի գնով Արաքսն անցնելուց հետո էլ ժողովուրդը դադար առնելու հնարավորություն չի ունենում։ Այստեղ փոխվում է նրանց վերակացուն. Ամիրդունայի փոխարեն շահը նշանակում է Խալիֆայու էլիաղ սուլթանին, որին հրամայվում է տարագրյալներին դեպի Իրան տանել դժվարանցանելի ճանապարհներով, լեռնային դաոիթավներով ու կիրճերով՝ թշնամու հետապնդումից խուսս տալու համար[24]։ Վրա հասնող դառնաշունչ ձմեռը թույլ չի տալիս շարունակել ճանապարհը, և դադթականությունը կանգ է առնում, հասնելով Թարումխալխալ, Ահար, Մուշկուն և սրանց մերձակա վայրերը[25]։ Գարնանը շարունակվում է երթը, այս անգամ Աբութուրաբ բեկի վերակացությամբ, և ի վերջո տաբաղրյալները ոտք են դնում Սալահան։ Այստեղ են տեղավորվում քաղաքներից դադթածները, իսկ գյուղացիները բնակություն են հաստատում շրջակա գավառներում ու գյուղերում, ինչպես Լնջանում, Ալնջանում, Գանդիմանում, Ջաղխոռում, Փարիայում, Բուրվառում, ինչպես նաև Շիրազում, Ֆարահաբադում և այլուր[26]։ Մեծ թվով տարագրյալների բնակեցրին Մազանդարանում, որտեղ նրանց մեծ մասը զոհվեց անբարենպաստ կլիմայի և այլ պատճառներով։ Շարղենի հաղորդմամբ՝ Մազանդարան գաղթեցված 30 հազար հայ և վրացի ընտանիքներից 40 տարի անց մնացել էր միայն 400 ընտանիք[27]։

*

Ինչպես և պետք էր սպասել, բռնագաղթի ժամանակ շահի հատուկ ուշադրության առարկան էր Ջուղան։ Դավրիժեցին մի առանձին գլուխ է նվիրել Ջուղայի գաղթի նկարագրությանը։

Ջուղայեցիների տեղահանումն ու փոխադրումը հանձնարարվում է Հանիս Թահմազզուլի բեկին[28]։

Նրանց հրաման է տրվում 3 օրվա ընթացքում հեռանալ հայրենի տնից, իսկ ով չի ենթարկվի, «զինքն սպանանեն և զընտանիս և զինչս նորա գերեն»։ Զորականները շարունակ շտապեցնում ու սպառնում էին։ Մի պատուհաս էլ շրջակա գյուղերից եկած մահմեդականներն էին, որոնք գաղթողների դույրին, կա՛ն-կարասուն տիրանալու համար այդ օրերին վխտում էին Ջուղայում և Թահմազզուլի բեկի օգնականները դարձած հսկում էին ու ստիպում ջուղայեցիներին՝ ժամ առաջ դուրս գալ իրենց տներից։ «...Եվ այսպես յաւիշտակումն և կորուստ էր ընչից քրիստոնէից»[29]։

Ջուղայից դուրս գալով, նրա բնակիչներն անհուն կսկիծով իրենց տների և եկեղեցիների բանալիները զցում են Արաքսը և սկսում գետն անցնել։ Այստեղ

---

24 Դավրիժեցի, էջ 45։

25 Նույն տեղում, էջ 45—46։

26 Նույն տեղում, էջ 45—46, 65, 148, 451։

27 سياحتنامهٔ شاردن، ترجمه محمد عباسی، ج ٤، تهران، ١٣٣٦، ص ٢٦
(Ֆրանսիացի ճանապարհորդը վկայում է, որ Շահ-Արասը Մազանդարանի մասին ասում էր, թե այն ստեղծված է իսկ և իսկ քրիստոնյաների համար, քանի որ այնտեղ առատ են գինին և խողը)։

28 Աղգությամբ վրացի, որը Վրաստանից պատանդ էր տրվել Իրանին, այնտեղ մեծացել և մահմեդականություն էր ընդունել։ Տե՛ս Դավրիժեցի, էջ 58, منشی، ج ٢، ص ٦٦٨

29 Նույն տեղում, էջ 59։

շահի հրամանով նրանց որոշ օգնություն են ցույց տալիս[30], քանի որ գետով անցնոգը այժմ Ջուղայի կապիտալն էր։

Լեոն «Խոջայական կապիտալ»-ում գրում է. «Առաքել պատմագիրը կսկիծով է նկարագրում շահարասյան դերեվարությունը։ Իրավունք ունի։ Բայց նա սխալվում է այնտեղ, ուր ջուղայեցիներին էլ դնում է միալար քշվող ժողովրդական դանդվածների հետ մի շարքում, իբրև նրանց վիճակակից»[31]։ Այժմ լսենք Դավրիժեցուն. «Թագաւորն Շահարաս հրամայեաց զօրապետաց իւրոց զի և նորա հրամայեսցեն իւրեանց զօրացն՝ զի օգնեսցեն ժողովրդեանն և անցուսցեն յայնկոյս գետոյն երիվարօք և ուղտուք»[32]։ Խոսքը՝ վերաբերում է ջուղայեցիներին, մինչդեռ մյուս գաղթականների մասին նման տեղեկություն չենք գտնի։ Այո, Շահ-Աբասը չէր կարող թույլ տալ, որ ջուղայեցիները ևս իրենց միլիոնների հետ կուլ գնային Արաքսի կոհակներին[33]։ Եվ բնական է, որ հատուկ հրաման է տվել իր զորապետներին՝ օգնություն ցույց տալու ջուղայեցիներին։ Հաղորդելով այդ մասին, Դավրիժեցին հարկ է համարում ընդգծել, որ դա շահի գթառատության արդյունքը չէր, ինչպես թվում էր առաջին հայացքից՝ «իբր թէ առ ի յողորմել և յօգնել ժողովրդեանն ջուղայեցւոց...»[34]։ Այսուհանդերձ, ջուղայեցիների թվում էլ շատ զոհեր ու տուժողներ եղան[35]։ Այդ մասին Դավրիժեցու տվյալները հավաստում են ժամանակի գրավոր հիշատակությունները[36]։

Հակառակ Անտոնիո Գուվեայի այն պնդմանը, թե Շահ-Աբասը ի պատասխան ջուղայեցիների հնազանդության և հավատարմության գաղթի ժամանակ Ջուղան անվնաս է թողել[37], Դավրիժեցուց տեղեկանում ենք, որ Շահ-Աբասի հրամանով Ջուղան իսպառ հրի ճարակ է դարձել։ «Եւ ոչ բնաւ թողին յարկ ծածկեալ կամ շէն,— պատմում է Դավրիժեցին,— այլ յաւեր՝ յապականութիւն դարձուցին»[38]։ Ըստ ավանդության, շահի հրամանով նույնիսկ ջրի բոլոր աղբյուրները թունավորեցին[39]։

Կրնկակոխ հետապնդող թշնամու գրոհն ամեն միջոցներով կասեցնելու մտադրությունից բացի Շահ-Աբասին առաջնորդում էր նաև տարագրվող

---

30 Նույն տեղում, էջ 61։

31 Լ ե ո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 65։

32 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 61։

33 Այս հարցում ակնարկ է Գուվեայի և նրան համամիտ հեղինակների այն կարծիքի անկայունությունը, ըստ որի ջուղայեցիների նկատմամբ շահի մասնավոր ուշադրության պատճառն այն էր, որ դեպի Անդրկովկաս նրա ձեռնարկած արշավանքի ժամանակ ջուղայեցիները մի շարք թուրք զինվորների սպանել և նրանց գլուխները նիզակների վրա բարձրացրած դիմավորել էին շահին (տե՛ս فلسفی، زندگانی...، ج ۳، ص ۲۰۲ С. Тер-Аветисян. Город Джуга, стр. 66).

34 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 61։

35 Նույն տեղում։

36 Տե՛ս Անանուն ժամանակագրություն (XVII դ.), («Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 182—183), Ստեփանոս վարդապետի Ողբ («Բազմավեպ», Վենետիկ. 1847, էջ 95, Միանսարյան, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 134), Հ. Տեր-Հովհանյանց, Նշվ. աշխ., հ. I, էջ 25 և այլն։

37 Տե՛ս فلسفی، زندگانی...، ج ۳، ص ۲۰۳

38 Դ ա վ ր ի ժ ե ց ի, էջ 61—62։

39 سیاحتنامهٔ شاردن، ج ۲، ص ۳۹٤

ժողովրդի և հատկապես ջուղայեցիների վերադարձի բոլոր կամուրջներն այրելու նպատակը։ Ջուղայի կապիտալը դարձի ճամփա չպետք է ունենար[40]։

Ջուղայի այրման մասին Դավրիժեցու տեղեկության հաստատումը կարող ենք գտնել ժամանակակից ականատես գրիչների հաղորդումներում, որոնցից է՝ դեպքերի մասնակից, Ջուղայի բնակիչ Հակոբ Երեցի թողած նկարագրությունը[41]։

Հետագայում Ջուղա այցելած 17-րդ դարի ճանապարհորդների (Շարդեն, Լոդես և այլն) ուղեգրություններում գտնում ենք երբեմնի ծաղկուն ու վաճառաշատ Ջուղայի մնացորդների նկարագրությունը[42]։

Որոշ հեղինակների կարծիքով ջուղայեցիներն իրենց ողջ հարստությունը տեղափոխել են Իրան[43]։ Սակայն Դավրիժեցու հաղորդմամբ, մի կողմից շահի հրամանը կատարող զինվորների սպառնալիքները և ստեղծված տագնապն ու շտապողականությունը, մյուս կողմից փոխադրման դժվարությունները ստիպում են ջուղայեցիներին իրենց ունեցվածքի և գույքի մի մասը թողնել, ընդ որում՝ «...զոր ոչ կարացին բառնալ՝ իւրաքանչիւր ոք պահուստ և թաքուստ արարեալ թաղեցին»[44]։

Դա պատճառ դարձավ, որպեսզի ավերված Ջուղան կրկին ու կրկին ավերվեր գանձ որոնողների կողմից, որոնք շարունակ փորում ու քանդում էին ամեն անկյուն, ուր միայն հնարավոր էր գանձ գտնել։

*

Ուշադրության արժանի է, որ բռնադատի ժամանակ տարագրյալների կողմից եղել են դիմադրության փորձեր։

Նախ, բնակիչներից շատերին հաջողվել է թաքնվել ու խույս տալ գաղթից։ Թամադղուլի բեկն ստիպված է լինում ջուղայեցի փախստականների ետևից նոր զորամասեր ուղարկել՝ Համգամ աղայի գլխավորությամբ։ Վերջինս բռնությամբ և սպառնալիքներով, մեծ դժվարությամբ կարողանում է ետ բերել նրանց և հասցնել գաղթեցվող մասսային[45]։ Նախիջևանի բնակիչներից շատերը նույնպես փախել են[46], իսկ գաղթածների մի մասը հետագայում ետ է վերա-

---

40 Նշենք, որ Գունարադին Ջուղայի ավերումը բացատրում է Շահ-Աբասի քաղաքական ու կրոնական նկատառումներով, այն կապելով Նախիջևանի հետ (տե՛ս فلسفی، زندگانی...، ج ۳، ص ۲۰۱ А. Рахмани, «Тарих-и алам арай-и Аббаси» как источник по истории Азербайджана, Баку, 1960, стр. 103).

41 С. Тер-Аветисян, Город Джуга, стр. 77.

42 Տե՛ս سیاحتنامهٔ شاردن، ج ۲، ص ۳۹۲—۳۹٤; Divers voyages et missions du P. Alexandre de Rhodes en la Chine et autres royaumes de l'Orient avec son retour en Europe par la Perse et l'Armenie, P., 1854. С. Тер-Аветисян, Город Джуга, стр. 74—82, 107—127.

43 Տե՛ս օր.՝ Տեր-Հովհաննեսյան, նշվ. աշխ., էջ 27։

44 Դավրիժեցի, էջ 59, 522։ Հետաքրքիր է նշել, որ այս պայմաններում այնուամենայնիվ ջուղայեցիներն իրենց հետ Սպահան փոխադրեցին բազմաթիվ մտավոր դանձեր՝ հայկական ձեռագրեր (տե՛ս Հ. Ասաքելյան, Ակնարկ..., էջ 20)։

45 Դավրիժեցի, էջ 62—63։

46 Նույն տեղում, էջ 354։

դարձել[47]։ Գուվեան ևս վկայում է, որ բոնադաղթի ենթարկվածները ոչ մի կերպ չէին համաձայնվում թողնել իրենց բնակատեղին[48]։

Սակայն առանձնահատուկ իրադարձություն է եղել Գառնի գյուղի բնակիչների համար դիմադրությունը[49], որոնք կարողանում են փախուստի մատնել գյուղ մտած զինվորներին[50]։

Լսելով այս հանդուգն արարքի մասին, Ամիրգունա խանն ստիպված է լինում անձամբ մեկնել Գառնի և ամենադաժան միջոցներով տեղահան անել նրա բնակիչներին։ Այսպես, նրա զինվորները գտնում և գլխատում են Գեղարդի ձորում թաքնված Մանուել և Աստվածատուր եպիսկոպոսներին, ապա խուզարկելով ողջ ձորը, դուրս են հանում նրա խոռոչներից մարդկանց, մի մասին կոտորում, իսկ մյուսներին միացնում գաղթականների բանակին[51]։

Այնուամենայնիվ, շատ փախստականների է հաջողվել թաքնված մնալ։ Նրանց մի մասը պատսպարվել է Քոռադարա կոչված ձորում, որտեղ պարսիկների թիրախն է դարձել Եախրշխան անվամբ մի քարայր։ Դավրիժեցին նկարագրում է այստեղ տեղի ունեցած արյունահեղ միջադեպի մանրամասնությունները, երբ պարսիկ զորականները սրախողխող են անում այրում պատրսպարված մոտ հազար մարդու՝ մեծից մինչև մանուկ[52]։

Այսպիսով, հերքվում է այն կարծիքը, թե մեծ գաղթի ժամանակ դիմադրության կամ բոլորի փորձեր չեն եղել[53]։ Բողոքն ու ընդվզումն էին, որ ստիպում էին պարսիկներին արտակարգ միջոցների դիմելու, ավելի նեղելու օղակը, ճնշելու և ետ վերադարձնելու փախստականներին։

Նշենք, որ գաղթից խուսափողների բանակն ընդգրկում էր բնակչության բոլոր շերտերը, այդ թվում և հոգևորականությանը, որը թվում է, թե ուրախությամբ պիտի ընդուներ մի ժամանակ այնքան բաղձալի շահի «հրավերը»։

Այս առումով հետաքրքիր է այն շրջադարձը, որ տեղի է ունենում Իրանի նկատմամբ հայ հոգևորականների ունեցած դիրքորոշման մեջ։ Եթե Շահ-Աբասի արշավանքի նախօրեին թուրքական իշխանությունների բռնություններից հալածված հոգևորականությունը շատերի նման դեպի պարսից երկիրն էր հայում՝ նրա թևի տակ պատսպարվելու համար, ապա պարսիկների Հայաստան մտնելուց հետո, ճաշակելով շահի «բարերարությունը», շատ շուտով նա հուսախաբ է լինում իր ակնկալությունների մեջ և գաղթի ժամանակ թեև խմբերի բաժանված և տարբեր կերպ, բայց ընդհանուր առմամբ՝ խուսափողական դիրք է գրավում։ Գաղթից խուսափող հոգևորականությունը ևս դաժանորեն պատժվում է։

*

Դավրիժեցին որոշակի տեղեկություն չի հաղորդում տարագրյալների թվի մասին, որը մնում է որպես կնճռոտ հարց։ Զանազան սկզբնաղբյուրների և

47 И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв. (ук. сб., стр. 278).

48 Տես فلسفی، زندگانی...، ج ۳، ص ۲۰۲—۲۰۳

49 Գառնիի դեպքերի մասին հիշատակում է և Անանուն ժամանակագրությունը («Մանր ժամանակագրություններ», հ. I, էջ 184...)։

50 Դավրիժեցի, էջ 47։

51 Նույն տեղում, էջ 47—49։

52 Նույն տեղում, էջ 50—52։

53 Գ. Գապպենճյանը, օրինակ, այն համոզմանն է, որ գաղթի ժամանակ «ոչ բողոքի շեշտ մը կար՝ և ոչ ալ ընդվզումի շարժում մի» (տե՛ս «Տաճար», 1912, էջ 365)։

հետաքրքրությունների բերած թվական տվյալները բաղդատելիս մեր առջև բացվում է խճճված մի պատկեր, որտեղ կարելի է հանդիպել ամենատարբեր թվերի։

Դավրիժեցին հաղորդում է, որ գաղթեցված հայերից 500-ական ընտանիք տեղավորել են Սպահանում և Շիրազում[54]։ Բայի զրանից, միայն Արծկեից ու նրա շրջակայքից Ալլահվերդի խանի կողմից գերվել էր 23 հազար քրիստոնյա (հայեր), որոնք քշվեցին Իրան[55]։ Մնացած դեպքերում գաղթականների թվի մեծությունը Դավրիժեցին հաղորդում է նկարագրական ձևով. ինչպես «...ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի յեղրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին (գաղթականների— Լ. Դ.), իսկ զերկայնութիւնն դովիմբ կշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ. և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին դրեալ»[56]։

Գաղթին ժամանակակից Անտոնիո Գուվեան 60 հազար է նշում տարագրված ընտանիքների թիվը[57], իսկ պարսիկների նահանջի ժամանակ գերվածներինը՝ 100 հազար[58]։ Շարդենի վկայությամբ 30 հազար ընտանիք հայերից և վրացիներից, գաղթեցվել է Մազանդարան[59]։ Վրացական աղբյուրի համաձայն՝ տարագրյալները կազմել են 80 հազար ընտանիք[60] (այսինքն՝ մոտ 400 հազար մարդ)։

Առանձին կանգ չառնելով այս հարցի վերաբերյալ բազմաթիվ այլ հեղինակների տվյալների վրա, նշենք միայն, որ այդ տվյալներն ընդգրկում են ամենատարբեր թվեր՝ սկսած 24 հազարից մինչև 600 հազար[61]։

Եղած տեղեկություններն անբավարար են տարագրյալների ստույգ թիվը որոշելու համար։ Սակայն, ի մի բերելով տարբեր ժամանակներում և զանազան վայրերից տեղահանված բնակչության մեծությունն արտահայտող թվական տվյալները, ինչպես նաև պարսիկների նահանջի ժամանակ ավերի ենթարկված ու թափուր մնացած շրջանների բնակչության քանակի վերաբերյալ տեղեկությունները, հիմք ենք գտնում ենթադրելու, որ այս հարցում թերևս իրականության մոտ են Հ. Առաքելյանի հաշվումները, ըստ որոնց գաղթականների թիվը մոտ կես միլիոն է եղել[62]։

---

54 Դավրիժեցի, էջ 46։

55 Նույն տեղում, էջ 33։

56 Նույն տեղում, էջ 40։

57 Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПБ, 1898, стр. 471.

58 Նույն տեղում, էջ 468։

59 سياحتنامهٔ شاردن، ج ٤، ص ٢٦

60 Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 112։

61 Տե՛ս Тер-Аветисян С. В. Город Джуга, стр. 79, История Ирана с древнейших времен..., стр 277; И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений Азербайджана и Армении в XVI — начале XIX вв., Л., 1949, стр. 253, محمد برنك، شاه عباس كبير، ص ٢٢١، فلسفى، زندگانى...، ج ٣، ص ٢٠٦، عباس اقبال، تاريخ مفصل ايران، ص ٢٧٨ F. Richards, A persian Journey, London, 1932, p. 80; Ա. Այպոյաճյան, Պատմություն ... հ. Գ, էջ 156 և այլն։

62 Հ. Առաքելյան, Հանրագիտական բառարան, հ. I, էջ 6, նույնի՝ Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ..., էջ 17։

Հայերից բացի գաղթեցվում էին նաև ադրբեջանցիներ, վրացիներ, հրեաներ, դեբրեր (գրագաշտականներ)[63], Դավրիժեցու արտահայտությամբ՝ «...եթէ քրիստոնեայ, եթէ հրեայ, եթէ մահմետական...»։ Սակայն հայերը բացարձակ մեծամասնություն են կազմել։

*

Շահ-Աբասի ձեռնարկած բռնագաղթը մարմին տվեց նրա շատ ծրագրերին։ Իրանի համար հայ արհեստավորների և մասնավորապես վաճառականության խաղացած դերը գարձել է հանրահայտ փաստ։ Պյետրո դելա Վալեի արտահայտությամբ՝ հայերն այնքան էին անհրաժեշտ պարսից շահին, ինչպես ճենովացիները իսպանական թագավորին[64]։

Պետք է, որ հենց առաջին տարիներից խիստ արդյունավետ եղած լիներ երկրի բնակեցումը նոր՝ հարկատու, արհեստավոր, շինարար, հողագործ և վաճառական բնակիչներով, որպեսզի բռնագաղթի պրակտիկան կրկնվեր հետագա տարիներին[65]։

Այլ պատկեր ուներ այդ պրակտիկան դաղթեցվող ժողովուրդների համար, որոնք բազմաթիվ զրկանքներ էին կրում, իսպառ կտրվում մայր հայրենիքից և զրկվում ինքնուրույնությունից։

Մեծ սուրգուներ ծանր հետևանքներ ունեցավ մասնավորապես հայ ժողովրդի կյանքում։

Հայրենազրկվեց հայ ժողովրդի մի հսկայական հատված, որի սերունդները մինչև օրս ապրում են օտար երկրում։ Եվ միայն վերջերս նրանց բեկորները հնարավորություն ստացան հայրենիք վերադառնալ։

Դավրիժեցին չթաքցրած մորմոքով պատկերում է հայ ժողովրդի ադետը. «Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալ ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց... եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեր և սլալեղու, որ և թշնամիք հողոյն և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ»[66]։

Անտոնիո Գուվեան, որ նույնպես պատմում է Արարատյան երկրի ավերածությունների մասին, վկայում է, որ հիմնահատակ արվեցին «ավելի քան բսան գեղեցիկ ու բնակչությամբ հարուստ քաղաքներ»[67]։ Միայն Երևանի նահանգում ավելի քան 1500 բարեկարգ բնակավայր կար, որոնցից յուրաքանչյուրն ուներ 400—500 բնակչություն[68]։

Հայաստանի շատ գավառներ հայազուրկ դարձան, երկրի հայ բնակչությունն ավելի նոսրացավ ու տկարացավ և երկար ժամանակ զրկվեց պաշտպանունակությունից, իր ինքնուրույնության համար պայքարելու հնարավորությունից[69]։

---

63 Գերրերը Սպահան էին տարվել մեծ մասամբ Քերմանից, Եզդից, Շիրազից (տե՛ս Դավրիժեցի, էջ 457)։

64 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 442։

65 Տե՛ս Դավրիժեցի, էջ 455—456, منشی، ج ۲، ص ۸۸۱

66 Դավրիժեցի, էջ 54, հմմտ. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 1282, էջ 262ա։

67 فلسفی، زندگانی.... ج ۳، ص ۲۰۳

68 Նույն տեղում։

69 Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1965, էջ 218։

Մյուս կողմից, Իրանում հաստատված գաղթականները մեծ դրկանքների ենթարկվեցին։

Սովը, հիվանդությունները, նոր բնակավայրի զանազան դժվարությունները տասնյակ հազարավոր կյանքեր խլեցին։ Շահ-Աբասի օգնությունն ու տված արտոնությունները քչերին էին բաժին ընկնում։ Գաղթականների հսկայական դանգվածներն ապրում էին կարիքի ու անիրավության ճիրաններում և զառնալով տեգի ժողովրդի բախտակիցները, ենթարկվում միևնույն ճնշմանն ու ֆեոդալական շահագործմանը, որոնց ավելանում է և կրոնական խարականությունը։

Սակայն որոշ պարսիկ և եվրոպացի հեղինակներ այլ կերպ են ներկայացնում մեծ գաղթի ունեցած հետևանքները, ճգնելով ոչ միայն անտեսել նրա ավերիչ նշանակությունը մասնավորապես Հայաստանի համար, այլև պնդել թե հայոց մեծ դաղթը կատարվել է ի բարօրություն հայ ժողովրդի։ Իսքանդար Մունշու մեկնաբանությամբ բռնագաղթը քրիստոնյաների նկատմամբ շահի հոգատարության արդյունքն էր[70], և գաղթականությունը, մասնավորապես ջուղայեցիները բնակություն հաստատելով Սպահանում, «ժամանակի իրադարձություններից ապահովություն ստացան»[71]։

Անշուշտ, իրանա-թուրքական պատերազմները, ինչպես և օսմանյան տիրապետությունը մեծագույն աղետ էին Հայաստանի համար, սակայն պնդել, թե բռնագաղթը փրկություն էր հայ ժողովրդին, միտումնավոր է և իրականության հետ անհարիր։

Անգլիացի Սայքսի կարծիքով՝ հայերի նկատմամբ Շահ-Աբասի վարմունքն ապացույց է նրա մեծաշնորհության և «հայացքների լայնության», քանի որ վոխանակ այդ քրիստոնյա գերիների հետ վարվեր ինչպես ստրուկների հետ, նա տեղափոխեց 500 հայ ընտանիք իրենց ողջ ունեցվածքով Արաքսի վրայի Ջուղայից Նոր Ջուղա՝ Սպահանի մոտ[72]։ Պարսիկ պատմաբաններ Նասրոլլա Ֆալսաֆին և Աբոլղասեմ Սահաբը խոսելով գաղթի մասին, վկայակոչում են ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնյեի այն միտքը, ըստ որի՝ չպետք է պատկերացնել, որ Շահ-Արասը հայերին իրենց հայրենիքից դաղթեցնելով, նրանց նկատմամբ չարություն է գործել, որովհետև սահմանային շրջաններում բնակվելիս նրանք շարունակ գրկանքներ էին կրում իրանա-թուրքական պատերազմների հետևանքով[73]։ Ավելի արտառոց է դարձյալ Տավերնյեից մեջ բերած՝ այն հաղորդումը, թե հայերը «առևտրից տեղյակ չէին և հարստությունից ու ունեցվածքից զուրկ էին», ապրում էին «կատարյալ աղքատության» մեջ և միայն նոր տեղում վերաբնակվելուց հետո «նրանք հարստության տեր դարձան, և նրանց մեջ հարուստ վաճառականներ գտնվեցին»։ Եվ եզրակացություն. «Ջուղայի հայերն իրավունք չունեն երբեք իրենց բուն հայրենիքը հիշել և այն լքելու համար ափսոսալ»[74]։

---

70 منشی...، ج ۲، ص ۹۶۹

71 Նույն տեղում, էջ 668։

72 P. Sykes, A History of Persia, vol. II, London, 1951, p. 181.

73 Տե՛ս ابوالقاسم سحاب، تاریخ زندگانی شاه عباس کبیر، تهران، ۱۳۲۵، ص ۳۰۸، فلسفی، زندگانی...، ج ۳، ص ۲۰۷

74 Նույն տեղում։

Նման կեղծարարությունից իրենց ապահովագրելու համար շատ հեղինակներ դերադասում են շրջանցել այդ հարցը։

Դավրիժեցու տեղեկությունները ինչպես տեսանք, ոչ միայն լրացնում են մեծ դաղթի վերաբերյալ այլ աղբյուրների հաղորդած տվյալները՝ ամբողջական պատկերացում տալով նրա մասին, այլև հնարավորություն են տալիս մերկացնելու և հերքելու պատմական այդ ակնառու փաստի սխալ, հակադիտական մեկնաբանությունները։

## НАСИЛЬСТВЕННОЕ ПЕРЕСЕЛЕНИЕ АРМЯН В ИРАН В XVII ВЕКЕ

(По данным А. Даврижеци)

Л. Г. ДАНЕГЯН

Резюме

«История» Аракела Даврижеци содержит ценные материалы по истории Ирана и армяно-иранских отношений. Значительное место в нем отведено насильственному переселению армян в Иран.

Это переселение, предпринятое шахом Аббасом I в 1604—1605 гг. и вошедшее в историю под названием «великий сургун», составило черную страницу истории армянского народа и с другой стороны сыграло свою роль в осуществлении стратегических, политических и экономических задач, стоявших перед Сефевидским Ираном.

Однако история переселения не всегда находит правдивое освещение со стороны некоторых персидских и западноевропейских авторов.

В статье рассматриваются истинные цели, характер, последствия переселения и в этой связи такие вопросы, как значение Джульфы—центра европейско-азиатской торговли шелком, позиция и положение разных слоев переселенцев, а также отношение к ним со стороны шахских властей, сопротивление переселяемого населения и т. д.

Сведения А. Даврижеци не только дополняют данные других источников, но и дают возможность опровергать ошибочные положения об этом переселении.